ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«13» ---------08---------- 2025թ. ՆՄՈ/795-Ա

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 11-Ի ՆՄՈ/684-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 13-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 11-րդ մասով, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 4-րդ կետերով, 3-րդ մասով և 34-րդ հոդվածի 1-ին մասով.

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2025 թվականի հուլիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի մի շարք պետական ոչ առևտրային կազմակերպությունների հանրակրթական ծրագրերի բնականոն ուսուցման աշխատանքները կազմակերպելու մասին» ՆՄՈ/684-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները՝
   1) որոշման նախաբանում «Հայաստանի Հանրապետության տարածքային զարգացման հիմնադրամի գործադիր տնօրենի տեղակալի 2025 թվականի հուլիսի 4-ի ՆԵ/01/2060-25 գրությունը» բառերից հետո լրացնել «և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2025 թվականի հուլիսի 31-ի ՆԴԽ/20.1/26160-2025 գրությունը,» բառերը.
   2) որոշման նախաբանում և ամբողջ տեքստում՝ «Մեծամորի միջնակարգ դպրոց» բառերից հետո լրացնել «Նորակերտի միջնակարգ դպրոց» բառերը.
   3) որոշումը լրացնել նոր ՆՆ9.1-9.2 հավելվածներով՝ համաձայն ՆՆ1-2 հավելվածների.
   4) որոշման նախաբանում և ամբողջ տեքստում՝ «Ծիածանի միջնակարգ դպրոց» բառերը փոխարինել «Հովտամեջի միջնակարգ դպրոց» բառերով.

5) որոշման 1-ին կետում «NN1-9 հավելվածների» բառերը փոխարինել «NN1-9.2 հավելվածների» բառերով.
6) որոշման N9 հավելվածն ուժը կորցրած ճանաչել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ,

ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

Восстановимая подпись

X

Սերտիֆիկատ՝
ԲԱՐՍԵՂ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ
2808860099

Подписано: NIKOGHOSYAN BARSEGH 2808860099 **Բ. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ**

Հավելված N2
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի
2025 թվականի օգոստոսի 13-ի
ՆՄՈ/795 -Ա որոշման

«Հավելված N9.2
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի
2025 թվականի հուլիսի 11-ի
ՆՄՈ/684 -Ա որոշման

«Նորակերտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հանրակրթական ծրագրերի բնականոն ուսուցման աշխատանքների կազմակերպում

«Նորակերտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հանրակրթական ծրագրերի բնականոն ուսուցման աշխատանքների կազմակերպումն իրականացնել 2-րդ հերթով՝ «Բաղրամյանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում, կազմակերպությանն անհատույց օգտագործման իրավունքով ամրացված՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Բաղրամյան գյուղի Կոմիտաս 47 հասցեում գտնվող դպրոցի շենքում:»:

Գլխավոր քարտուղար՝ **Ա. Հովհաննիսյան**

Հավելված N1
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի
2025 թվականի օգոստոսի 13-ի
ՆՄՈ/795-Ա որոշման

«Հավելված N9.1
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի
2025 թվականի հուլիսի 11-ի
ՆՄՈ/684 -Ա որոշման

«Հովտամեջի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հանրակրթական ծրագրերի բնականոն ուսուցման աշխատանքների կազմակերպում

«Հովտամեջի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հանրակրթական ծրագրերի բնականոն ուսուցման աշխատանքների կազմակերպումն իրականացնել 2-րդ հերթով՝ «Արշալույսի Ս. Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում, կազմակերպությանն անհատույց օգտագործման իրավունքով ամրացված՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Արշալույս գյուղի 20-րդ փողոցի, 22 հասցեում գտնվող դպրոցի շենքում:»:

Գլխավոր քարտուղար՝ **Ա. Հովհաննիսյան**